**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

«ՅՈՒՆԱՅԹԵԴ ՔՈՆՍԹՐՈՒՔՇՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Լոռու մարզի Լերմոնտովոյի գաբրոնների հանքավայրի շահագործման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ հանրային 2-րդ լսման

**Լերմոնտովո** **23.04.2026 թ.**

Լոռու մարզի Լերմոնտովոյի գաբրոնների հանքավայրի արդյունահանման աշխատանքների

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի (21.06.2014թ. ՀՕ-110-Ն, խմբագրված 2023 թ), ինչպես նաև ՀՀ կառավարության 19.11.2014 թ. N1325-Ն որոշմամբ սահմանված կարգի (որոշումը խմբագրվել է 28.12.2023 թիվ 2343-Ն որոշում) 2026 թ. ապրիլի 23-ին՝ ժամը 11:30-ին, Լոռու մարզի Լերմոնտովոյի համայնքապետարանի շենքում կայացավ «ՅՈՒՆԱՅԹԵԴ ՔՈՆՍԹՐՈՒՔՇՆ» ՍՊԸ-ի կողմից փորձաքննության ներկայացված՝ Լոռու մարզի Լերմոնտովոյի գաբրոնների հանքավայրի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ հանրային երկրորդ լսումը, որը օրենքով սահմանված կարգով ներկայացրեց ՇՄՆ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ Ք. Հարությունյանը: Հանրային լսմանը ներկա էին համայնքապետարանի աշխատակիցները, ընկերության տնօրենը և նախաձեռնող ընկերության բնապահպանական խորհրդատուն:

Ք. Հարությունյանը ներկայացրեց Նախագծի և ՇՄԱԳ հաշվետվության վերաբերյալ ՇՄՆ և շահագրգիռ այլ կառույցների կողմից ներկայացված դիտողությունների և առաջարկությունների, լրամշակման ներկայացման օրենսդրական ընթացակարգերը, նախատեսվող գործունեության շահագործման ընթացքում շրջակա միջավայրի բաղադրիչների վրա սպասվող հիմնական ազդեցությունները:

Ընկերությանը ներկայացվեցին հարցադրումներ կապված ջրի բերման աղբյուրի և ռեկուլտիվացոն աշխատանքների համար նախատեսված գումարի բավարարության վերաբերյալ: Ընկերության բնապահպանական խորհրդատուն մանրամասն ներկայացրեց ՇՄԱԳ հաշավետությունում ներառված շրջակա միջավայրի բոլոր

բաղադրիչների վրա հնարավոր ազդեցության շրջանակները, ազդեցության գնահատումները և դրանց բացառման կամ գոնե նվազագույնի հասցման բոլոր ՀՀ –ում գործող օրենսդրությամբ սահմանված միջոցառումները:

Բացի դրանից, ներկայացրեց նաև մշտադիտարկումների ծրագիրը և դրա նպատակը, համայնքի համար նախատեսվող սոցիալական ծրագրերը:

Բարձրացված հարցին ի պատասխան նշեց, որ ջուրը նախատեսվում է բերել պայմանագրային հիմունքներով Վանաձոր համայնքից և ներկայացրեց ռեկուլտիվացիոն աշխատանքների ընթացակարգերը (2փուլով՝ լեռնատեխնիկական և կենսաբանական), նշեց, որ բոլոր հաշվարկներն իրականացվել են այսօրվա դրությամբ շուկայական գների համապատասխան և համաձայն օրենսդրության՝ դրանք հետագայում ենթակա են վերահինդեքսավորման:

Բնակիչների կողմից  հարց բարձրացվեց արոտների հետ կապված, ընկերության տնօրենը պատասխանեց, որ հողատարածքն իրեն է պատկանում վարձակալության հիմունքներով, մինչ օրս էլ գյուղի բնակիչների կողմից անասունները ցածրադիր հատվածներում արածել են և ինքը որևէ խոչընդոտ չի առաջացրել, հետագայում էլ նս բնականոն հունով կարող են շարունակել, և հանքավայրի շահագործման աշխատանքները խոչընդոտ չեն կարող հանդիսանալ:

Հանրային լսումն անցավ արդյունավետ քննարկման մթնոլորտում, ներկաները ողջունեցին նախատեսվող գործունեությանը:

Հանրային լսման լուսանկարները կցվում են սույն արձանագրությանը:

Վարող և լսման պատասխանատու՝

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝ Ք. Հարությունյան

Ձեռնարկող՝

«ՅՈՒՆԱՅԹԵԴ ՔՈՆՍԹՐՈՒՔՇՆ» ՍՊԸ տնօրեն՝ Ռ. Գալստյան